

Տակառակութեանց կ'ըաղխի եւ կ'իյնայ պաշտօնէն, իրեն յաջորդելով Մարտիրոս Ա.ը: (Խաչիկ Լեւոնեան, «Բիւզանդիոն», 1904, Թ. 2324:)

Անշուշտ 1606ին Ջաքարիա Ա. գէթ երեսուն տարեկան կար, եւ կրնանք անոր ծնունդը դնել իբր 1576ին:

Ջաքարիա Պատրիարքի վրայ ժամանակակիցներէն աւանդուած ցիրուցան տեղեկութիւններն ամփոփելով՝ պիտի կարենանք անոր կենաց ընթացքն աւելի մանրամասնել եւ լուսաւորել:

Գրիգոր Ա. Կեսարացի, Կ.Պոլսոյ Պատրիարքն, առ Մելքիսեդ Կաթողիկոս Էջմիածնի Յանդիմանական գիր մը գրած է, ստոյգ 1614—5ին: Արուանձտեանց Գ. (Թորոս Աղբար, Բ., Կ.Պոլ. 1885, էջ 280—293) հրատարակած է այս Յանդիմանագիրը, առանց որոշել կարենալու գրութեանս հեղինակը, վասն զի իր օրինակին սկիզբը կը պակսէր: Սակայն ինչպէս գրութեանս բովանդակութենէն արդէն յայտնի կրնար տեսնուիլ, այս շատ կարեւոր թուղթը գրած է Գ.ր. Ա. Կեսարացի, մշտնջենաւոր հակառակորդն Մելքիսեդեկի, եւ Ջաքարիա եւ Յովհաննէս Խուլ Պատրիարքներու, պատրիարքութենէ 1613ին արտաքսուելէն ետեւ: Հռոմի Բրորականտայի հայերէն ձեռագրաց մէջ կայ պահուած ամբողջական օրինակ մը, որուն վրայ իտալերէն վերնագիր գրուած է՝ «Գրիգորի Ա.ի Կեսարացոյ թուղթ առ Մելքիսեդ Պատրիարք»: